ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Медицинский Центр "Норк-Мараш"
Армения, г. Ереван, Норк,
ул. А. Арменакяна 108/4
Тел: (+37410) 65 09 71; 65 09 61
Факс: (+37410) 65 38 69
или 65 05 60

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 108/4
Հեռ. (+37410) 65 09 71; 65 09 61
Ֆաքս (+37410) 65 38 69
կամ 65 05 60

"Nork-Marash" Medical Center
Armenakian str. 108/4
Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 65 38 69
Fax: (+37410) 65 38 69, 65 05 60
E-mail: heart@nmmc.am

ք. Երևան 01.07.2024թ.

Որոշում
<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն ՓԲԸ տնօրենի ժ/պ
Թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/58

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

<<Նորք-Մարաշ> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն բժշկականնշանակությանապրանքների ձեռքբերման նպատակով 13.05.2024թվականինգնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/58>> ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին տարբեր չափաբաժիններով մասնակցել է նաև Անուշ Կարապետյան Հովհաննեսի Ա/Ձ-ն (Այսուհետև՝ Մասնակից):

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/58>> ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով) նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մասնակցի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:Մասնավորապես.

-Անուշ Կարապետյան Հովհաննեսի Ա/Ձ կողմից ներկայացված հավելված 1.1-ում 15և 16-րդ չափաբաժինների համարառաջարկված ապրանքի ապրանքային նշանն ուարտադրողը չեն համապատասխանում հրավերի հավելված 1.1-ով նախատեսված ապրանքի ապրանքային նշանին, ինչպես նաև որպես համարժեք համարվողների ապրանքային նշաններին: Բացի այդ Մասնակիցը չի պահպանել հավելվածի ձևը և սխալ է վերնագրել չափաբաժինների անվանումների սյունակը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից www@armeps.am համակարգի միջոցով Մասնակցին սահմանված կարգով ծանուցվել է շտկում իրականացնելու համար, տարամադրվելով Օրենսդրությամբ նախատեսված 1 աշխատանքային օր ժամկետ:

Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից որևէփաստաթուղթչիներկայացվել գնահատող հանձնաժողովին՝ արձանագրված անհամապատասխանությունները չի շտկվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի կողմից ներկայցված

հայտը գնահատել անբավարար՝ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված լինելու պատճառով և մերժել:

Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը 24.05.2024 թվականին հրապարակվել է տեղեկագրում՝ www.gnumner.minfin.am կայքում:

Ընթացակարգի շրջանակներում 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կնքվել է <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/58-7>> ծածկագրով գնման պայմանագիրը, որի մասին հայտարարությունը 20.06.2024 թվականին հրապարակվել է www.gnumner.minfin.am կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում փաստում ենք, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է

արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հարկ ենք համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ցանկանում ենք նաև փաստել, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր: Եվ եթե փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ հանգում ենք այն եզրակացության, որ Անուշ Կարապետյան Հովհաննեսի Ա/Ձ-ն, հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Փաստում ենք նաև, որ Ընթացակարգի հրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ առկա չէ և սույն որոշման կայացման պահին Ընկերության կողմից հայտի ապահովում չի վճարվել Պատվիրատուին:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակցի հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Անուշ Կարապետյան Հովհաննեսի Ա/Ձ	81731753	ք. Երևան, Սարյան 29/2շ, հեռ. 098-771010	Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	-	-	01.07.2024թ. ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/58

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑ

Անուշ Կարապետյան Հովհաննեսի Ա/Զ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու /2/ տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, վերջինիս տվյալները սույն որոշման կայացման հաջորդող օրը ներկայացնել լիազոր պետական մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏՆՕՐԵՆԻՉ/Պ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ